

ՊԱՏԱՆՈՒՄ ԳՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Պոչկարիոյ համար	12
Տարեկան	6
Վեցամսեայ	3
Սրբապատկանի համար	15
Վեցամսեայ	8

Ստեփանի համար	3
Տարեկան	1.50
Վեցամսեայ	0.75

Մանուգրան տողը սոսիսին երեսին համար 40 ս. զսկ վերջին երեսի համար 20 ստեփանի է. երեսին աւելի անգամներու համար 20 0/0 գեղջ կրոյ վայր: Վառնայի համար ձևոֆե 40 ստեփան

ՇԱՐՋՈՒՄ

ՈՐԱԳԻՐ ԱԶԳԱՑՆԵ, ՔԱՂՈՔՈՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԻՏՄԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵԲԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նախկին եւ զրաւ զրկիչ հոլապոլոքեանս հասցիին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արսաստանականի համար ձևոֆե (20 ՍԱՆԹԻՄ) (Պոչկարիոյ համար ձևոֆե (15 ՍԱՆԹԻՄ)

Գրուելիւնք եւ չեն տրուիր

ՇԱՐՋՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՍԱՍՆՈՅ ԶԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Մայիս 11ին Պոչկարիոյ վիճենա կը հեռագրեն հետեւեալը.

Հայաստանէն եկած աեղեկու թիւներու համաձայն՝ իշխանութիւնները չեն կրցեր գտնել հայ ապստամբապետ Աղբաբիկը: Սասունի բնակիչները դաշտին մէջ պատուապարած են. որպէսզի կտորածներէ ազատ մնան:

Զօրքերու բաժին մը Մուշ եկած է, կարծելով որ Աղբաբիկը իր խմբով միտտին հոն թագնուած է:

—Իրատէի մը համաձայն զօրքերը Սասունէն հեռացած են: Սասունի բնակիչները պիտի տեսնուին Մուշի գաշտին մէջ: Մուշի գաւառին մէջ որոշ խաղաղութիւն կը տիրէ Անդ. ռիկի անհետանալուն պատճառով: Ժէնէրալ Սալի փաշան հրաման ստացած է Մուշ վերադառնալ: Այս վերջին տեղեկութիւնը կը հաղորդէ Պ. Հ. գործակալութիւնը:

—Վիճենայի «Բօլ. քօրէս» թերթին մէջ հրատարակուած է Վիճենայի թերթը ղեկավարին պաշտօնական հաղորդագրութիւնը, որով հետեւեալը կը յայտնուի:

Հայերուն ապստամբութիւնը Սասնոյ մէջ յառաջ եկած է Պարսկաստանէն և Ռուսիայէն եկող զրգռիչներու դրդումով, որոնք հրոսախմբեր կազմած են ապստամբութիւն յարուցանելու նպատակով: Հակառակ այդ ամենուն թուրք զօրքերը յաջողած են կարգը վերահաստատել: Իշխանութիւնները ներում չնորհած են ապստամբութեան բոլոր մասնակցողներուն:

—«Թան» լրագիրը կը հաղորդէ, որ քօնթ Պէրսի անգլիական երեսփոխանական ժողովին մէջ թիպէթի մասին խօսելէ վերջը, կաւելցնէ, —իսկ ինչ կը վերաբերի մօտերս Հայաստանի մէջ տեղի ունեցող յուզումներուն, արտաքին գործոց նախարարութեան երեսփոխանական ժողովը

վին բարտուարը կը յայտարարէ թէ անգլիական կառավարութիւնը հազարակցութեան մէջ է Պրանսայի և Ռուսիոյ կառավարութիւններուն հետ և կը յուսայ որ Ռուսիոյ և Պրանսայի Բիթլիսի հիւպատոսները անգլիական հիւպատոսին հետ համաձայնելով գործեն, որոշման մը յանգելու համար:

Այսօրվան լուրերից ուրեմն զլիաւորաբար երկու եղբայրացութեան կարելի է գալ: Առաջինը՝ որ Անդրանիկը, իր ընկերները և նրա հետ միացած սասունցիները ամրացած են լեռների այնպիսի վայրերում, որ կառավարութիւնը այլևս հարկ չէ համարում նրանց ետեւից ընկնել: Երկրորդ՝ որ Սասունի աւերված գիւղերի բնակիչներին ուղում են տեղաւորել գաշտի մէջ:

Նախորդ թիւերով արդէն յայտնել էինք որ երեք պետութեանց հիւպատոսները պնացել են Անդրանիկին համոզելու. բայց ինչպէս երեւում է նրանք էլ չը պէտք է կարողացած լինեն Անդրանիկին գտնելու: Մի բան շատ պարզ է. այն որ այս անգամ եւրոպական պետութեանց երեք ներկայացուցիչները ժամանակին հասնելով կարողացել են խաղաղ հայ ազգաբնակչութիւնը, մանաւանդ Մուշի գաշտի մէջ, կտորածներից ազատել: Ըստ երեւոյթի նոյն ներկայացուցիչների միջամտութեան շնորհիւ է որ Սալի փաշան իր զօրքով ետ է կանչվել Սասունից:

Վիճենայի ղեկավարի պաշտօնական յայտարարութեան համաձայն խաղաղութիւնը վերահաստատուած է, և ներման են արժանացել նոյնպէս ապստամբութեան մասնակցողները: Սա մի շատ անորոշ յայտարարութիւն է. իրական ապստամբները ձեռք չեն անցած. ուրեմն ինչ ապստամբներ են որ ներման են արժանացել: Թեքեւս գիւղացիների այն մասը, որը ապստամբներին չէ

հետեւել: Յետոյ, ինչպէս կարող է խաղաղութիւնը վերահաստատվել, երբ թէ Անդրանիկը և թէ նրա խմբերը անձնատուր չեն եղել, մինչև անգամ չեն բարեհաճել բանակցութեան մանելու: Ահա մի խոշոր մտթ կէտ, որը ինչպէս երեւում է մօտիկ ապագան միայն կարող է պարզել:

Խաղաղութիւնը կարող է երկու պայմանով միայն իրապէս հաստատված լինել: Առաջինը որ Անդրանիկը և իր ընկերները որոշած պէտք է լինեն չը շարունակել կռիւը. քաջելու աւելի յարմար ժամանակին երեւան գալ: Իսկ երկրորդը՝ որ Աղբաբիկը և իր հրոսախմբերը ու կրօնակալ որոշած Սասունցիք բոլորովին ոչնչացած պէտք է լինեն: Վերջի ենթադրութիւնը գոյութիւն չունի, որովհետեւ այդպիսի մի մեծ իրողութիւն ամբողջ աշխարհը կը թնդացնէր, իսկ Սուլթանին հպատակ մամուլը ահագին իրարանցում կը գցէր: Գոյութիւն չունի և նրա համար, որ առաջուց յայտնվեց, թէ Անդրանիկը և իր հետեւողները, այնպիսի անձատջիւի տեղերում են ամրացել, որ թուրք զօրքը չէ յանդգնում յառաջ խաղալ:

Մնում է երկրորդ ենթադրութիւնը: Այդ էլ կասկածելի է երեւում. որովհետեւ եթէ Անդրանիկը և իր ընկերները ուղեւորին կռիւը գաղտնից, այն ժամանակ նրանք բանակցութեան կը մտնէին, գոնէ իրենց պահանջները եւրոպական գիւտնագիտութեան առջեւ դնելու համար:

ՎԱՐԴՕ

ՀԱՎԱՊԱՏԿԵՐԸ

—(00)—

Ճիշդ կէս օր էր, ճաշի սեղանին առջեւ նստած վերջին պատաս կը ծամէի կրորդ դուռնու գարնուեցաւ: Դուռը բացուեցաւ և 25-30 տարեկան երիտասարդ մը ներս մտաւ, զլուրը դրած կաղիի ֆէսէն, աղտոտ ձեռքերէն և հազուսաններէն կը հասկցուէր, որ պարզ արհեստաւոր մըն

էր. ամօթխած կերպով ինձ մտեցաւ: Այցելութեան պատճառը հարցուցի:

—Ինչ կուզէք:

—Իրամ բերք եմ, պատասխանեց, —ի՞նչ դրամ է, հարցուցի գարմանքով:

—Յեղափոխութեան համար հանգանակութիւն մը կայ եղբ, անոր համար դրամ բերք եմ, Այս բնկով ձեռքին մէջ բռնած եւ լաթի կտորով մը փաթակուած փոքրիկ ծրար մը ներկայացուց:

Իսկոյն կուսեցի թէ ինչ բնկ կուզէ եւ հրամցուցի առանձնասնեակս:

—Այդ դրամը ո՞վ զրկեց, հարցուցի:

—Ես ինքս բերած եմ, պատասխանեց:

—Ինչ բանի համար բերած ես:

—Երկրի կուտոգներուն զրկելու համար. ինչ ընեմ, ես կարողութիւն չունիմ, որ երթամ կուտիմ, ձեռքես եկածը այս է, հացէս կտրեր այսքան դրամ հուաքեր եմ, կը խնդրեմ որ անոնց զրկէք:

—Արհեստդ ի՞նչ է:

—Կոշիկ կը ներկեմ, շուստո պոյանի եմ:

—Շատ լուս, ուրախ եմ, որ եղբայրներուդ ցաւովը կը տառապիս եւ անոնց մասին կը մտածես:

Այս բնկով նուիրատուներու տնտեսակը բացի անունը եւ տալիք նուէրին քանակութիւնը արձանագրելու համար:

—Քանի՞ զրուշ է հարցուցի:

—Այս է, բնկով քուրջի կտորի մէջէն երեք անգլիական ոսկի հանեց և սեղանիս վրայ դրաւ:

Աչքերուս չէի հաւատար. շուստո պոյանի մը ինքնաբերաբար հանգանակութեան մասնակցի Յանգիական ոսկիով... Յուզուեցայ եւ եթէ չամաչէի իսկոյն ճակատը պիտի համարուէի: Յուզումնքէս աչքերս թըրջեցան, մանաւանդ երբ նոյն վայրկեանին միտքս բերի, որ կան մարդիկ, որոնք այսպիսի զրկանքներով հուաքուած դրամը անխղճօրէն իրենց անձնական հաճոյքին կը ծառայեցնեն, այսպիսի աշխատաւոր ձեռքերու արգիւնքը կը լափեն սովալլուկ մարախներու նման, յեղափոխական գործիչ կամ պարզ յեղափոխական անուան տակ:

Մի քանի քաջայերական խօսքեր ըսի իրեն եւ երկրի մասին կարեւոր եւ արտապնդող տեղեկութիւններ հաղորդելով ճամբու դրի:

Այս երիտասարդ թորգով Սաշատուրը Սղերգի էր:

Այս սրտանձուխը եւ յուզումն ունից միջոցէպէ կարգացող հարուստները արդեօք չեն կարծիր . որոնք կամ բողոքովին կը մերժեն Յեղափոխական սուրբ գործին նպատակը ալ եւ ալ գայի աւետարաններ կարգաւորել եւ կամ ազգատին ողորմութիւն տալու պէս կրնախց մի քանի գրուել կը նետեն :

Ինչ մեծ հակապատկեր Լուստրո պոյաճիին հանդէպ :

Սրտի ազնուութեան , զգացումներու նրբութեան եւ պարտականութեան խորունկ ըմբռնումը ինչ մեծ տարբերութիւն Լուստրո պոյաճիին եւ հայ հարուստներուն մէջ :

Հայ հարուստները այն ատեն միայն իրենց քսակին բերանը կը բանան , երբոր իրենց փառասիրական ձգտումներուն գոհացում տուող պարագաներ կը ներկայանան , երբոր լրագիրները , մեր բարձրու անկման միակ պատճառ եղող շողորթութեան լրագիրները—կսկսին զովորանել , փառաբանել եւ մինչեւ կրկին քարձրացնել : Մի քանի օսկիներով մեր մէջ յարեցա՞նք անունը վայելիչ շատ զիւրացած է . շնորհիւ անպարտաճանաչ լրագրութեան . եւ այս քաջաբերութիւն մը եղած է մեր Իմաստակ եւ շատ անպակ տղա հարուստներուն , որ իրենց զրամները բողոքովին երկրորդական նպատակներու յատկանեն , փոխանակ ազգին ներկայ անհրաժեշտ պահանջներուն գոհացում տալու , ազգին անմիջական եւ կարեւորագոյն պէտքերը հոգարու :

Այս օրերս Գահիրէի մէջ հայ մը Գրիգոր Տէրի (Եղիազարեան !!!) անունով 10 000 ոսկի կտակեր է , որուն տոկոսով 30 ուսանողներ եւրոպայի համալսարաններուն մէջ մէջ է կ'մասնագիտութիւն պիտի սորովին . եւ կտակատար ապուշ հայը կը կարծէ ատով թէ հայութիւնը պիտի փրկուի . . .

Եթէ Տաճկահայերը նոր կսկսին ուսանողներու օգնելու գործը , Ռուսահայերը շատոնց սկսած են այդ շահուն հետեւել եւ արդիւնքը ինչ եղած է . . . զրեթէ ոչինչ . անհատներ որոնք ձրիաբար բարձր կրթութիւն ստացեր են եւ հայութեան մագիչ չափ օգտակար չըլլալէ գատ . նոյնիսկ վասակար եղած են , շատ փոքր թիւ բացառութեամբ մը : Ռուսահայ լրագրութիւնը շարունակ գանձագատներ ուղղած է այդ կարգի ուսանողներուն դէմ , որոնք փոխանակ ազգին օգտակար ըլլալու հարուստ գրամսփոխով եւ յաճախ օտարազգի օրինորդներու հետ ամուսնանալով պարզապէս քարիւղի տներ եւ պարտականներ եղած են եւ իրենց վրայ հրաւիրած են Գամառ — Գաթիկայի թուրք թէ՛ շեթէ ուսումնիչ շահ չունի հայաստան . թքել եմ քու ալ ուսումնիք ալ վրան . . .

Հայաստան այսօր միայն ու միայն մէկ բանի կը կարօտի—զենքի ու գրամի—

Ճշմարիտ հայը միայն զենքի համար գրամ պէտք է տայ . ազգին ներկայ անյետաձգելի պահանջը այս է .

Թափառիկ

ԻՆՉ ԸՐԻՆ

Վայրկեան մը մէկդի չարտելով վատերու յարուցած սգեղ աղմուկներն ու բացասական քարոզները , անենք անոնց յեղափոխական ճա-

սերը , ապստամբութեան պատգամները միութենական —ազգասիրութիւնները , հոգ չէ թէ ատ ամենքը ըլլան կեղծ . թագնուած գարշիլիւնը պատակներով , և շարքները ատ աղմուկը հանողներուն—

Ինչ ըրին . . .

Արիւնի ալխարհին մէջ կեցող ժողովուրդին , թշնամիին դէմ կուրծք աւող հայդուկին պատգամներ օրտաացող ատ ապուշները եթէ չէին ու չեն կրնար մէկ օրէն միւսը յեղափոխական ըլլալ , անձերին վտանգի տակ դնել և յեղափոխական գործեր ընել . գոնէ կրնային եւրոպայի մէջ դիւանադիտական և հանրային կարծիքը պատրաստելու աշխատել :

Ինչ ըրին , երբ իրենք էին որ կը պուռային թէ՛ —դիւանագիտութեան ակաւջ կարող չի կայ . կը դժգոհէին թէ դիւանագիտութիւն պէտք է և աս բանին համար գլուխ կու տնջնէին :

Աս գործն ալ Գաշնակցութիւնը իր վրայ առաւ և յեղափոխական համեստութիւն արամագրեց անոր :

Չուզիմով ատ գործին համար թափուած յայտնի կամ անյայտ ջանքերն ու արդիւնքները թուել , կը բաւէ միայն ցոյց տալ Գաշնակցութեան աշխատութեամբ շորս տար , է ի վեր հիմնուած ՓՐՈ-ԱՄՄԷԻՍԷԼ . Պատկանելի , զորմ մը որուն շորջը բողոքում են ամենէն հեղինակաւոր անձնաւորութիւնները , և որուն այսօրուան օգուտը եթէ մասնակի է . վաղը կը լրացուցակի :

Ինչ ըրին անոնք , շարլաթան և շորթող այդ հերոսները , ինչ ըրին նոյնիսկ ՓՐՈ-ԱՄՄԷԻՍԷԻՍԷԼ հիմնարկութեանէն ետքը :

Անոնք ո՞չ միայն հայ աստագանքին անունով ժողուած գրամներն սանթիմ չի յատկացուցին ատ գործին , այլ նոյնիսկ ելան վատաբար խմբեցին անոր շորջը բողոքող և անձնաւորաբար աշխատող օտարներն անգամ . . . Մինչեւ . ո՛ւր հասցուցին լրբութիւնը :

Երբ անքին լուռ ու մուռ յեղափոխական գործը առաջ կը տանէր յեղափոխական կազմակերպութիւնը , երբ Սանասորները , Սաստուրները , Բախէները կուգային նոյն իրազորելի հայ յեղափոխութեան պատմութիւնը , ինչ ըրին , ինչ կը չէին իստքի հերոսները : —Անոնք զազոնի պատրաստութիւններու , երեւակայական բանակներու նշնիմներով ժողովուրդը կուզէին խաբել , մտք քսելով նաև իրականութիւններուն վրայ :

Բայց ո՛ւր է , հիմա ստանն է անոնց բանակներու երեւան գալուստ , ո՛ւր է , որ ծակ պահած են , ինչ ըրած են հրացանները , որ օրուան պահած են . թող մէջտեղ հանեն հատ մը , աւելի չէ , և աչքերնիս խօթեն . . .

Ինչ կրնանցուցեր , ինչ կը վրնտոնենք , հրացան , յեղափոխութիւն ծագողներուն քով . . . Աստուած շորնէ : Եւ եթէ պատահմամբ , շատ չէ , երկրի մէջ մէկ հրացան ունենային ատ մարդիկը , կը պարկեցնէին միայնակ աղմուկ հանելու և ժողովուրդին զրպարը պարպելու համար , և ատ աղմուկին անունն ալ կը դնէին —պատմութեան . . .

Շահագործուելիք բաներու ա՛յն քան սով կզգան բանակներ ունեցող 1 ատ մարդիկը , որ ամբողջ մէկ-երկու տարի է՛ , արտասահմանի մէջ ինչո՞ղ Միւս-Չիթնանի դիակները կը շահագործեն ու Աստաբազարի ծխախոտի զաշխմաններուն պատկերները դրին իրենց թերթներուն մէջ ! . . .

Յեղափոխական գործիչները հայհոյող , երկրի գործունէութիւնը ծագող ատ վատերը ա՛յնքան պէտք ունին անոնց , որ անհասական կիսատպատ նամակները իրրեւ գործիչներու տեղեկագիրներ , առանց նոյնիսկ քաղաքի և տեղի անունի . հրատարակելու կիսօրուայի խոթերուս ելած են :

Հապա սա միութենականները , չէ-զոքնե՞րը , որ անտարբեր և քարացած ամբոխին քաջաբերիչը ըլլալու դաւաճան դերին մէջ կուզին ցուցնել ինքզինքնին , որ միութենական անունին տակ կ'կտան՝ վատերու վոճմակը յեղափոխական շարքերուն մէջ բերել մ'այնչելու արագութեան հետեւէն կ'ան և , ինչ ըրին , գործի օգտին ! աշխատող ատ փարիսեցիները , վատերու ատ ստրուկ փողարները :

Ինչ ըրին , ո՛ւր է խօսքերուն հետ քուն աննշան գործ մը ցոյց տային :

— Գործը երկրին մէջ է , գոռաց յեղափոխականը , եկէք և հոս միացէք :

«Անոնք որ չեն համակերպի կահուէր ներկայ գործունէութեան Եղանակին —կը գրէր ԳՐՈՇՆԿԻ մէջ երկրի գործիչներէն մէկը դեռ երկու տարի առաջ— անոնք որ ունին աւելի լայն և օգտաւատ ծրագիրներ և օժտուած են արարձագոյն կարողութիւններով և անկեղծօրէն փափաք ունին հայրենիքի դատին ծառայելու , թող վազեն երկիր . Մենք հոս պատրաստ ենք գրկուբաց ընդունելու զիրենք և ձեռք ձեռքի տուած համբաշխ գործելու . Ի՞նչ գան , արդէն երկրին մէջ անապահ պահանջ կայ ձեռնաւ , զարբայցած և համբերատար գործիչներուն :

Ո՛ւր է , որ միութենականը , որ չէլքը գնաց գործի վայրը , ցոյց տուէք որ ճակատը պագնենք :

Ինչ ըրին անոնք ընդհակառակը , իրենց կեցող ծածկելու համար փախուսի ճամբայ փնտնեցին ու կըսկոտային .

— Ժողովուրդը դրամ չի պիտի տայ , վստահութիւն չունի , միացէք որ դրամ տայ :

Գործի վայրը գանուող գործիչը ուրիշ ճամբայ ցոյց տուաւ այս անգամ :

— Չէք վստահիր , ուրեմն հաւաքեցէք զարմնիկ ընտրեցէք ձեր մէջէն մէկ-երկու վստահելի անձեր , մենք ճամբայ ցոյց կուտանք , թող գան երկիր , թող աչքովին տեսնեն երկրի գործունէութիւնը և յետոյ տան :

Փախուստի գոռ չէր միայն : Բայց ո՞վ է ըսեր ու հաւատացեր թէ՛ ատ մարդիկը իսկապէս գործն է որ կը հետապնդեն ու կը սիրեն . . .

Աս ամեն կիսօրուայի խոթերը տեսնելէ ետքը զատուելի մորթով երեւնալ ուղող ատ փարիսեցիներուն երեսին պէտք է նետենք մ'լշտ մեր թուրք ինչ ըրին գոռ . ինչ ըրին , հայրենիքի թշնամիներ , արու կներ քանդելու , քայքայելու ճիգերնէք գատ :

Այսքան խայտառակութիւններէն ետք , եթէ քիչ մը անշալ շէք գրտեր , եթէ ամեն զգացում մտած է ձեր սէջ , գնացէք . որքան կուզէք պուսպէք , զուսպէք , ոտնացէք , ինչ կուզէք ան ըրէք , միայն գիտցէք որ միշտ թուրք ու մոր ունիք պատրաստ , միայն գիտցէք որ սանթիմի չափ արծէք չունիք

Յիշիպէ

Ժիրայր

ՅԻՒԿԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՓՍԿՈՒՐԸ —(օ)—

Երեկ կրթական նախարարութեան հրամանաւ ոտիկանութիւնը ազգային վարժարանները փակեց : Այս դէպքը՝ առաջին Պուլկարահայ գարնացական պատմութեան մէջ՝ ապացուցիչ տպաւորութիւն մը ըրաւ Յիւլիպէի հայ հասարակութեան վրայ : Չենք կարծել որ հոգաբարձութիւնն ալ բողոքովին անտարբեր գտնուած ըլլայ անոր հանդէպ հակառակ որ ամեն օր զանի կակիկալէր : Անի անմիտ յամտութեամբ մը կուրացած , անձկամիտ կուսակցաւորութեամբ մը տոգորուած մինչեւ վերջ՝ յարատեւեց իր որոշման մէջ : Եւ հիմայ որ այլեւս այդ այնքան ծանրակիւն իրողութիւնը կատարուած է՝ ազգային շահերուն նախանձարնդիր ամեն հայու պարտականութիւնն է հարցնելու հոգաբարձութեան՝ որ բարոյապէս պատասխանատու է ազգին առջեւ՝ թէ ինչ ըրաւ երեկուայ դէպքին տղան անհելու համար և որք . ո՞ն ինկատի ունեցաւ իւր գոյժողութեանց մէջ այն ամեն հետեւութիւնները , որոնց անի կրնար ծնունդ տայ առաջապիւն :

Հայու մը սիրտը կը կծկուի երբ մտաբերէ թէ՛ անճարակ անձերու ձեռքին սէջ՝ որոնք ազգային զարոցացական հաստատութեան մը դեկը կը վարեն՝ աննշան գործ մը ինչ ծանր նկարագիր և աղէտալի հանգամանք մը կ'առնէ առանց որ այդ անձեր վայրկեան մը իսկ մտքերնէն անցնելու պահին վտանգներու այդ անհանութիւնը՝ գորս կը պատրաստեն ապագայ հայութեան զլխուն Պուլկարի մէջ :

Ընկերներէս մէկը երեկուայ դէպքին վրայ խօսելով իրաւամբ կըսէ հոգաբարձութեան անդա՛ն երուն համար . «Եթէ երբէք այս մարդիկը երկրին կառավարութեան զլուխ անցնելու բազդն ունենային՝ ապահով եմ որ իրենց վարչական սխալներն ձրքերուն շնորհիւ , որոնց նոյն տեսնելու գժբողութիւնը ունեցաւք , երկու օրուայ մէջ Պուլկարիան օտար պատմութեան մը ձեռքն կը յաննէին :

Եւ գիտէք ինչ բան պատճառ եղաւ ազգ . վարժարաններու կառավարութեան կողմէ փակուելուն : Այժման հոգաբարձութիւնը բողոքովին անարդարօրէն պատճառանկ ըրած ըլլալով նախկին հոգաբարձութեան նշանակուած վարժուհի մը կրթական նախարարութիւնը միջամտեց ի նպատակ իրենց պահանջներով որ անի վերտուին վարժարան ընդունուի : Հոգաբարձութեան անձինն ատարկութեանց առջեւ՝ որոնց տակ բուն իսկ ամենէն ցածհոգի կուսակցամտութիւն մը պահուած էր՝ վարժուհին , Օր . Մ . Ս . խոհմութիւն ունեցաւ՝ սպասուածով հետեւանքներու պատճառ չի նկատուելու համար՝ ազգային վարժարան մտնելու իրաւունքն հրամարկու պահանջելով սակայն որ իրեն տրուի հոգաբարձութեան կողմանէ վտերագիր մը՝ որով վերջինն հաստատել թէ գանի ընդունած է իւր վարժուհի ազգային զարոցիւն՝ խոստանալով որ ինքն իւր կողմէն այդ վտերագիրը ընդունած պահուն իւր հրատարականի թուղթն կուտայ հոգաբարձութեան Սակայն հոգաբարձութեան անդամները , որոնք կը հակակոչին նախկին նշանակութեան զուրկ այդ պահանջին ինչ մեծ բարոյական արծէք կը կրէր

Իւր մէջ մերժեցին իրենց եղած առաջարկն նախաստիպելով ազգային մանկան վարժարանէ զրկել յան պաշտօնական կերպով ճանչնալ ճշմարտութիւնը թէ Օր. Մ. Ս. անխառնութիւնը որոշուած է զպրոցէն:

Ասոր վրայ կառավարութիւնը հրահանգեց ազգ. դպրոցներու փակուել: Սակայն այդ ազաններն պահ մը խորհեցան արդեօք թէ ինչ բրեճեալեան (նախորդ օրինակ) մը ստեղծած են ապագայ հասարակական դէպքերու թէ ինչ զենք կուտային կառավարութեան ձեռքէն ալեւս խստիւ հակելով վարժարաններու վրայ՝ ինչ սոսկալի հարուած կուտան այն տեսակ մը ինքնավարութեան՝ զոր այնքան տարիներէ ի վեր կը վայելէինք մեր դպրոցական գործերուն մէջ: Հետո չէ այն օրն երբ կառավարութիւնը այլեւս առանց որ եւ է զիջողութեան համաձայնելու՝ ինչ որ կը ընէր մինչեւ հիմայ՝ պիտի պահանջէ որ ազգ. վարժարաններու դաստառը նշանակուին ցէնզը համապատասխանող անձերն միայն. իսկ մեր մէջ այնքան հազուադէպ են անոնք. և աւելի հազուապիտ են անոնց մէջ իրենց մայրենի լեզուին տեղեակ եղողներն: Հետեւաբար հետո չպիտի ըլլայ այն օրն՝ երբ մինք մեր վարժարաններու մէջ չպիտի կրնանք ուրեմն զատուած մը որ հայ մատաղ սերունդին աւանդէ իր մայրենի լեզուն և մայրերն պատմութիւնը: Եւ այս ամենն մի միայն անոր համար, որովհետեւ հոգաբարձութեան զուտան գտնուեցան ազաներ՝ որոնք իրենց կիրքերն սեւեթ բարձր դասերն ազգային շահերէն:

Բայց չկանխենք դէպքերը: Թողունք, որ ապագան իւր բարոյական գոտաւորանին առիւտայ արժանաւորելով տիրուող սոսորուայ հոգաբարձութեանը և ջանանք ի վեր հանել երկուսն ազգային իսկական նշանակութիւնը ներկայի համար:

Երեկուայ դէպքը ցաւովի դէպք մը ըլլալէ զատ ուրիշայից զէպք մըն է նաեւ: Ապագային պիտի ճանչնամք անոր ամբողջական նկարագիրը: Սակայն ներկային համար այն անի արեւմտեակ կարեւորութիւն մը ունի: Այդ կարեւորութիւնը այն իրողութեան մէջ կը կայանայ, որ առաջին անգամ ըլլալով այնքան բացայայտելի երեւան կուգայ զբազարականութեանն՝ անանկութիւնը մինչեւ մեր օրերն Պուլիպիոյ հայութեան դպրոցական գործերն վարող ջոջ դասակարգին՝ զոր թրջական մգլոտած ընթացքը կուտակու է մեզ, Երեկուայ դէպքը՝ զոր տարբեր տեսակեակ կրնամք նկատել ծայրագոյն արտայայտութիւնը կըտեսնէ՝ որ Ֆիլիպիի հայութեան երկու հակառակորդ հասանքներն այնքան ատենէ ի վեր իրարու դէմ կը մղէին՝ կուգայ ցուցնել թէ անցած են այլեւս այն ժամանակներն, երբ Ֆիլիպիի ազաները դպրոցական գործերը կը վարէին իւր որեւէ քանթրոլէ զուրկ ընտանեկան կամ «խնամիական» գործեր, որոնց կարգադրութիւնը: այլ ինքիք մը մէջ կը ըլլար. և երբ դասատու մը մինչեւ այն ատեն պաշտօն ունէր ազգ. վարժարաններու մէջ մինչեւ որ հոգաբարձութեանը կամահանութիւնը չաճած էր, և պատճառէ կը զարգէր այն պահունքը իրեն հակառակորդ կամ ո՛չ բարեացակամ մարմին մը կանցնէր դպրոցին գլուխը: Պարոն ջոջերը պէտք է գիտնան նաեւ թէ իրենց քանահանութիւնը համեմատ չեն կրնար այլեւս դասատուի կամ վարժուհիի մը բարեթիւնը հետ խաղալ ու զամ տեսնել զանոնք զուրկ նետելով դպրոցէն, թէ մենք կը կառավարուինք օրէնքներով՝ որոնք անհատի մը իրաւունքը ամբողջ դասակարգի մը քանահանութիւնը վեր կը դրանք և հարկ եղած ատեն զանի կը պաշտպանեն:

Անշուշտ ներկայ հոգաբարձութեան օրերը համարուած են Անոր յաջորդներն թող տեսնեն թէ վարժարանի մը հոգաբարձութեան պաշտօնը փայտառնելով և դասատուներուն ամսաթոշակներն վճարելու մէջ չի սահմանափակուիր, թէ անի ազգային տեսարանը զէպքերու անգի չի տալու համար պէտք է անցուկ կուտակեցանուլութեան և անձնական քանահանութեան ծառայելէ հետո կենայ, գիտակից ըլլայ այն ծանր և միանգամայն ազանի գերին՝ զոր կրտսանձնէ:

Հայ մը
9 Մայիս 1904
Ֆիլիպի

ՀԱՅԿԱՆԱՆ ՀԱՄԵՐԿՈՒԹԻՒՆ
Թ Է Զ Ր Ա Ն Ո Ի Մ
—o—

Ապրիլի 17ր նոր դարադրուի մը քոցա թէհրանարնակ հայերու համար:

Թէհրան եթէ ոչ ընդ միշտ, գոնէ յաճախ թատերական ներկայացումներ ունեցած է այցելու դերասաններու և կամ սեղացի սիրող խումբերու կողմէն՝ եւ լսած պարզ ու մանկական երգեցողութիւններ, բայց երբէք կանոնաւորուած ու քառաձայն համերգութիւն (քոնցերթ) ըլլած չէր, որ ամէն քաղաքակրթութեան ազգերու մէջ ընդունուած ու գնահատուած է:

Պ. Ա. Չամբասան, այդ եռանդուն երաժշտագէտը, ստալին զարկը տուաւ թէհրանարնակ հայերու սիրողներին մի խումբ պատրաստելով, որ կը յուսանք թէ ժողովուրդէն գնահատուելով յարատեւութիւն կուտենայ և մենք հայերս զուրկ չենք մնար գոնէ մերթ ընդ մերթ լսելու մեր ազգային քաղցրանուագ երգերը, որոնք կը յիշեցնեն մեզ. մեր անցեալ փառ:

քր կամ ներկայ դժոխային դրութիւնը:

Սմբասան պ. Չամբասան, ամբողջ երեք ամիս շարաշար աշխատութեամբ, բոլորովին անվարժ ուժերից պատրաստեց 35 անձից բաղկացած մի խումբ ամէն խոչնդոտ ու արգելք առաջնոր կոտորով, որ կը յարուցուէր ժողովուրդին մի մասի կողմէն, պարզապէս անձնական աղոտա տեսլութեամբ կամ գոնէ եսամոլութեամբ, որ յաճախ պատահուած է հայերու մէջ, մանաւանդ թէհրանում:

Համերգը պատրաստուած էր ազգային ու ժողովրդական երգերէ և ուսմանական պարերէ: Երեկոյթը թէ եւ անթերի մի գործ չէ կարելի համարել, քանի որ բոլորովին անվարժ ուժերէ կազմուած էր. բայց սպասուածէն շատ աւելի յաջող անցաւ:

Ապրիլ 17ի շարաթ երեկոյ Հասանարաթի թատերասրահը ամբողջապէս լեցուած էր. ներկաներուն մէջ կային նաեւ եւրոպացիներ. միայն ամէն առաջը իմութեան պատնէջ կանգնող խումբը իր բացակայութեամբ կը փայլէր, որոնց պարագլուխն էին մէկ քանի խաներ եւ ազաներ ու իրենց հետեւորդները. ընդ որում եւ թէհրանի երկուս վարժարաններու յարգելի տեսուչը, որ զժառանգաբար բարի սովորութիւնը ունի ազաներու ամէն կամայականութեան խոնարհաբար գլուխ ծնելու՝ գուցէ արգարացի պատճառներով եւ անցեալի փորձառութեամբ, որովհետեւ պ. տեսուչը իր կեանքին մէջ գոնէ մի անգամ փորձած է Երեւանի նահանգական վարժարաններում, ժողովուրդին շահերը պաշտպանել ու ժողովրդականութիւնը շահել, բայց հոգաբարձութեան ուժի առաջ շարաշար յաղթուելով վարժարանէն հեռացուած է. հետեւաբար այդ օրինակէն խրատուած՝ այլեւս ուխտած է ժողովուրդին արդար ու օգտակար

«ԿՐԱԿՈՏ ԶՈՒՐԸ»

(Միջրի կնակ, ից)
(Թարգ. ուսուցիչ ից)
Ե.
(Շար. նախադր. քիւն)

Մարտի 10-ն երգում էր այսպէս. վարժարանակ որ մեր ժողովուրդը կուտ և հարուստ էր. բայց հիմա նա ոչ կուտ է. ոչ հարուստ, ու չէ տեսնում իր աղքատութիւնը, որովհետեւ կրակոտ ջուրը նրան կուրացրել է:

Քիւր են հոտերը, սուր են զգեստները, ձուկ որսալու գործիքները, ուր է նախկին տարիների ուժը եւ անխնայութիւնը:

Մերերը գեւ յիշում են լաւ մամակը. բայց դուք այն էլ չէք ունենալու: Յիսուս տարի առաջ դուք տարեկը միանգամ միայն արքում էիք. որովհետեւ օդին հետո էր:

Օդին միայն քաղաքում կար այն միջոցին. մենք էինք գնում օդու մաս, բայց հիմա նա է մեզ մաս եկել:

Ամեն մի սաւանի մէջ ու գամից չափ օդի կը գտնես. նոյնիսկ մեր ի վաների մէջ են ներս սողում ոռանները՝ օդու հետ միասին, իսկ Լանդուրը լաւ ձկնորսի պէս ձեռք իր թոռի մէջ է գցել. ձուկը ջրի մէջ լողում է:

կարող է եւ թորը չընկնել. հարիւր ձուկ կը բռնուին. բայց սասն անգամ աւելին թոսից ազատ կը մնան. իսկ ձեզ օդու մէջ լողացողներդ բոլորիդ էլ Լանդուրը գցել է իր թոռի մէջ:

Նա ամեն ինչ կը իւլէ ձեզինց... Դուք գեւ հոտեր, թոռեր, եւ թակարթներ ունէք. բայց չուտով ոչ ինչ չի մնայ. ամեն ինչ պէտք է պատկանէ Լանդուրին եւ դուք պէտք է դանաճը ձեզինց խլված հոտերի հովիւները, ձեզինց խլված ուղեւորներին պահպանները, նոյնիսկ տունը րան էլ ձերը չը պէտք է լինի:

«Լանդուրը կուտէ. Լանդուրան իմն է. ինչպէս եւ ամեն ինչ, ինչ որ կայ նրանում, իսկ դուք կործար կը հաւատաք, որովհետեւ ուժը չէք ունենալ առելու նրան» — «ոչ նա մերն է»... Միթէ նա միայն պիտի կարողանայ որսալ օղոր աղէտներին եւ չնիկներին, որոնք վազվզում են տունդրայի մէջ, կամ թէ լճերում լողացող ձկներին: Այ. բայց դուք ինքներդ ամեն րան կը որսաք եւ կը տաք նրան. եւ ձեզ պիտի թաւայ որ ինքը Լանդուրն է այդ ամենը ձեռք բերել, ոչ թէ դուք. որովհետեւ կըրակոտ ջուրը ձեզ կը կուրացնէ:

«Ե՛յ, Բոյագիրը. դու երիտասարդ եւ ուժեղ ես. օդու մէջ մի լողա՛, Լանդուրը կարիպէ քեզ փոխարէնը վճարել... եւ սարսափելի կը լինի վճարման ժամը: Լանդուրը իրիտ է. նա ոչ միայն ամեն ինչ կը վերցնէ

ինչ որ դուք ունէք, այլ եւ ձեզ եղջերուների եղջերներով կպաննէ ւ»

Դժբեւեւ լոկեց. բայց Բոյագիրի սրտին չառան նրա ծանր խօսքերը: Դժբեւեւ լոկուց յետոյ լսողների սիրտերը նեղացան. կարծես թէ ծանր քարերի տակ ընկան: Բայց երբ մի բաժակ օդի խմեցին, այն ծանր քարերը ինզղվեցին օդու մէջ:

Երգիչն էլ խմեց. թուրացած զըլուխը կախ լնկաւ կրծքի վրա. նա չփոխված ու ժպտալով կարծես ուզում էր առել:

— Եւ ձեզ ճշմարտն սասցի, բայց ոչ մի ճշմարտութիւն չէ կարող փոխելու այն, ինչ որ նախորդված է... Մատուռը մտնելու եւ մկրտութեան ճէպը կատարելու համար, նախապէս հարկաւոր էր ճամբէն մաքրել: Ինքը ալիքաւոր ձիւնակոյտեր էր դրել. մատուռն էլ չըջապատված էր նրանցով ինչպէս շնիկների պոչերից չինված վերնակներով:

Մատուռները գինվեցին թիւրով եւ հայր ի վանի տանից բռնած սկսեցին ճամբէն մաքրել: Մատուռների միահատուած շխատութեան շնորհիւ ձիւնից պատեր կազմվեցին: Աշխատելիս սամոզները գոգում էին հայր ի վանին:

Շատ լաւ ճամբ է հայր ի վանը, նա սամոզներից լաւ չնիկներ է ձեռք բերում. նա պէտք չունի գնալ տունդրա եւ ձեռքի ու գտնելու պիտուած սոված մնալ եւ ստոյն շնիկներ բռնելու համար: Նա շնիկներին ձեռք

է բերում իր տաք տանը նստած, փորը կուտ. նրա ձեռք բերած շնիկները տեղական վաճառականների մօտ ամենալաւերն են համարվում: Ճէրտեղական կոչված շնիկները գերազանցում են միւսներից: Հայր ի վանը Բոյագիրի գէմքին նայելուն պէս իսկոյն հասկացաւ թէ ինչ կայ նրա մտքումը, իսկ Բոյագիրը մտածում էր՝ ինչպէս անէր որ իր պարկի մէջ գտնված 15 շնիկների մօրթերը բոլորը տէր հօրը չը տար մկրտութեան համար, այլ միայն հինգը տար, իսկ միւս մնացած տասը ուղարկէր Լանդուրին օդի բերել տալու համար: Այդ հոգերի մէջ ընկղմած, նա բանակցութիւնների սկսեց:

— Որչա՛հ կառնես, հարցրեց Բոյագիրը: Հայր ի վանը Բոյագիրին նայելով պատասխանեց.

— Եւ քեզ չեմ նեղի, դու էլ ինձ չես նեղիր:

Եւ իսկապէս նա չը նեղացրեց Բոյագիրին եւ նրա բարեկամներին. սկզբում նրանց հիւրասիրեց ստած ձկով. վերջը պաքսըմով ու թէլով, հապա օդով: Կիրենք խմում էին արիւնի պէս կարմիր եւ շաքարի պէս անուշ օդի, իսկ տղամարդիքը սպիտակ:

Վերջը երէցկիներ նորածնի համար բերեց մի չապիկ եւ կապոյտ թեղի վրա անցրած խաչ:

(Շարունակելի)

բաղձանքներուն արգելք հանդիսանալ եւ խնկարկել ու երկրպագել խանութուն (որոնք զժամանակս հազարներով կը վխտան Պարսկաստանում) ծթոս գաղափարներուն :

Թէհրանի երկսեռ վարժարաններու պ. տեսուչը ստանձնած է նոյնպէս աւելի կարեւոր ու օգտակար . . . պաշտօն մը, որուն պէտք է երախտապարտ ըլլանք ամէն թէհրանաբնակ հայերս, յարգելի տեսուչը նկատելով, որ Պարսկաստանում լարուոր հեռաձայնի գործածութիւնը շատ սահաւ է, ինք իր վրայ առած է շարժուն հեռաձայնի պաշտօնը. հաղորդեցէք իրեն մի լուր, լինի այն հասարակական թէ անհատական, հինգ վայրկեանէն Թէհրանի արեւելքէն արեւմուտք, հիւսիսէն-հարաւ իմացած կը լինեն, որը սակայն քիչ յուզում առաջ չէ բերած թէհրանաբնակ հայերուն մէջ : Ուստի կը խնդրուի յարգելի տեսուչէն, մի քիչ սահմանափակել իր գործունէութեան շրջանը, որով երախտապարտ կը թողու մեզ, թէհրանաբնակներս :

Համերգը շատ յաջող անցաւ, երգերէն մեծ մասը, ինչպէս ազգային երգերէն Մայր-Արաքսի, Բամբ որոտան, Հայաստանի արեգակը եւ ուրիշներ. ժողովրդական երգերէն, Ձինչ ու գինչ, Չեմ ու չեմ, Հո՛յ նազանըմ, Այազեազ-էջմիթին. ժողովուրդի խնդրանք կրկնուեցան եւ երեքնեցան ու բուն ծախհարութիւններ խնցիկ : Իսկ պարերը չափազանց գոհ թողուցին ներկաները. հանդիսատեսները մեկնեցան շատ ուրախ տպաւորութեան տակ. ժողովուրդի բաղձանք կը յուսացուի կրկնութիւն :

Դատաստանս

Թէհրան 19 ապրիլ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆՈՅ ԱՓԵՐԷՆ

Իզմիր 10/23 Մայիս 904

Մեր նախորդ թղթակցութիւնով Իզմիրի Առաջնորդութեան վրայ խօսելով ըսած էինք որ՝ ամենէն առաջ պէտք էր Գաւառական ժողովը կազմակերպել, որը պիտի կարողանար անկանոն և ապիկար անձերէ բաղկացեալ ժողովները օրինաւորապէս կազմակերպել ու նոր առաջնորդ մը ընտրել Իզմիրի վիճակին : Այժմ այդ ժողովը կազմակերպուած է և կը բաղկանայ հինգ կրօնական, քսան աշխարհական անդամներէ :

Աւելորդ կըսեպէնք այդ անդամներուն անուններուն հետ ի՛նչ նկարագրի տէր ըլլալին պատկերացնել «Շարժում»-ի սուղ էջերուն մէջ :

Անցեալ ամսոյ 30ին նորնտիր Երեսփոխանական ժողովոյ անդամները հրաւիրուած էին ի նիստ գումարուի . ցաւ է մեզ յայտնել որ կրօնական հինգ անդամներէ զատ 20 աշխարհականներէն միայն 7ը եկած էին, իսկ մնացեալ 13ը իրենց բացակայութեամբ կը փայլէին, որով ամբողջութեան կէսէն քիչ ըլլալով ժողովը յետա-

ձգուեցաւ :

Գաւառական ժողովոյ անդամներուն՝ առաջին անգամին իսկ՝ այս անտարբերութիւնը խիստ դատապարտելի է, որովհետեւ իզմիրի հայ համայնքի մեծամասնութիւնը այդ շրջերուն վրայ լաւ համարում կազմած ըլլալուն՝ վստահած են անոնց և երեսփոխանական ժողովոյ անդամակցութեան կոչելու պատիւը ըրած էին : Այո՛, դատապարտելի կը գտնենք, որովհետեւ ցաւօք կը տեսնենք թէ առաջին օրէն իսկ, այդ ժողովականները ժողովորդին վստահութիւնը շարաշար գործածելով կը լքեն զինքը : Անոնք՝ այդ ժողովուրդին քուէով ընտրեալ անդամները, որ կոչուած են ամեն անձնական շահերն, կամ անհատական զձուձ հաշիւներն ու նրկատունները առաթուր կոխելով, անաչառ ու անկողմնակալ ոգիով ժողովուրդին շահը պաշտպանել, մի՞թէ այդ կերպով պիտի պաշտպանեն «ժողովուրդին իրաւունքը» :

Ինչպէս մեր նախորդ թղթակցութեան մէջ ըսած էինք՝ մօտ երկու տարիէ ի վեր քաղաքին մէջ երեսփոխանական ժողով չէ գումարուած՝ որով կարգ մը խնդիրներ առկա մնացած են, ասոնց ի թիւս Առաջնորդական ընտրութիւնը : Ուստի Առաջնորդականը նկատի ունենալով ասոնք կրկին անգամ հրաւիրեց նորընտիր երեսփոխանները ժողով գումարուելու, զոր ամսոյ 7ին փութացած էին գալու : Այս անգամ ներկայ էին 4 կրօնական և 14 աշխարհական անդամներ : Ժողովը նախ Պատրիարքարանէ հասած երեսփոխանական ընտրութեան հրահանգները և պաշտօնագրերը աչքէ անցուց, յետոյ ընտրութեան տեղեկագրերը կարդաց և յետոյ իրան կազմեց, որ կը բաղկանայ Ա. և Բ. երկու ատենապետներէ, ու Ա. և Բ. երկու ատենադպիրներէ, և վերջապէս ընտրութեան տեղեկագրերն էր որոշեց զրկել Պատրիարքարան՝ ընտրութիւնը հաստատելու և նոր հրահանգներ զրկելու համար :

Առաջնորդական ընտրութիւնը զոր՝ բաւական ժամանակէ ի վեր Պոլսոյ և Իզմիրի լրագրութեան օրուան նիւթ դարձած է՝ կը յուսանք թէ ժամանակին «Շարժում»-ի պատուարժան ընթերցողաց հաղորդելու պատեհութիւնը պիտի ունենանք :

Բարիդի նշանաւոր օրաթերթերէն «ՂՂ Մթթէն»՝ ասկէ առաջ քանի մը անգամ տեղւոյս կառավարութեան կողմէ «անպաշտօն» կերպով արգելեցաւ Իզմիրի մէջ, որովհետեւ հայկական ինդրով կը զբաղէր կամ հայոց ի նպատ-

գրութիւններ կը հրատարակէր : այս օրերս դարձեալ այդ տեսակ գրութիւններ հրատարակած ըլլալուն պաշտօնապէս արգելուած է «ՂՂ Մթթէն»-ի Թուրքիոյ մուտքը : Երեսփոխաններ կըսեցին ֆրանսական թղթատան սուջե և կը ձերբակալեն «Մթթէն» ստացող . . . անճարակ հպատակները : Օտարահպատակներուն բան մը չեն կրնար ընել :

Վարուսան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

«Քօր. պիւրոյի» գործակալութիւնը կը հաղորդէ որ Պոլսոյ մէջ ձերբակալուած է Սուլթանի փեսան, Գեամիլ փաշան Երլազի քանի մը բարձրաստիճան պաշտօններու հետ, որովհետեւ անոնց քով գաղտնի թղթակցութիւններ գտնուեցին : Աստուցմէ մէկ քանին արդէն Ասիա արտուած են :

«Բօլիթ, Քօրէս» Բարիդի թղթակցը կը հաղորդէ որ Տէլկասէն համաձայն է Կօլուխօվաքիին Թուրքիոյ մասին յայտնած կարծիքներուն :

Մայիս 13 Պոլսէն «Յայթոլրագրին» կը հաղորդեն որ Սուլթանի փեսա Գեամիլ փաշային ձերբակալումը տեղի ունեցեր է Սէլամլըի ատեն : Ձերբակալման պատճառ կը համարուի այն որ իբր թէ Գեամիլ փաշան ի նպատ Մուրատի Սուլթան Համիտին դէմ դաւադրութիւն պատրաստած է :

ՌՈՒՍԻԱ

Պերլինի թերթերէն մին կիւմուտայ որ նախարար Բլէվէ հրամայած է իշխանութեանց հրէաները չը նեղել, եթէ անոնք նոյնիսկ իրենց բնակութիւնը հաստատեն մինչեւ օրս արգելուած վայրերու մէջ :

Բեթերսպուրկէ Պերլին կը հեռագրեն որ արգարագատութեան նախարարը շրջաբերակաւով մը յայտարարած է որ այլեւս Սախալին արտոբաւներ չը պիտի զրկուին. այլ յանցաւորները տեղաւորուին Եւրոպական Ռուսիոյ բանտերուն մէջ :

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿՍԵՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

11 մայիսին Բեթերսպուրկէն Հոմ կը հեռագրեն որ Ալէքսիէվի, Սգրիտովի և Քուրօրաթկի-նի միջեւ անհամաձայնութիւններ ըլլալը ճիշտ է. մանաւանդ վերջին երկուսի :

Մայիս 11 «Թայմզ»-ը կը գրէ որ ճարտնական բանակի երեւու-

թական անգործութիւնը միջխուանկէնկի քով, հետեւեալ պատճառներով կը բացատրուի :

Քուրօրի կողմէ իր զօրքերուն նախ հանգստանալու միջոց տալ, երկրորդ կրպակէ երրորդ զօրաբաժնի հասնելուն, որպէսզի աւելի մեծ ուժով յարձակի մէնչեալ Քուրօրաթկիին վրայ, միւս կողմէ ատեն քաղաքներու յարձակումներուն գէմ պաշտպանէ իր զօրքին թիւերը, որոնց բռնած զիրքերը շատ երկար գիծ մը կազմեն :

Նոյն թերթը կը հաղորդէ որ ռուսերը մէնչեալ Քուրօրի զօրքերը շրջապատելու շարժում մը կընեն :

Մայիս 12ին Լօնտօն լուր հասած է որ ճարտնացիները կըրկին յառաջ կը խաղան. այս լուրը կը հաստատուի նաեւ ռուսական աղբիւրներէ :

Բեթերսպուրկէն պաշտօնապէս կը յայտարարեն որ մէնչեալ Քուրօրաթկիին հեռագրով մը կիւմացնէ ճարտնացիներու յառաջ խաղացումը :

Բեթերսպուրկէն գործակալութիւնը մայիս 12ին կը հաղորդէ որ ճարտնացիները յառաջ կը խաղան. քանի մը զօրամասեր մտած են Մանչուրիոյ ներսերն, իսկ մեծամասնութիւնը կեդրոնացած է Ֆէնխուանկէնկի քովերը :

Տէլլը Էքսպրէս» թերթը կիւմանայ թէ ամերալ Սգրիտով մտադրած է վախճանագրի նաւատորմի զորք յարձակումներ գործել ճարտնական ափերուն վրայ, որպէսզի ստիպէ զանոնք իրենց նաւատորմից Ինդին ծովէն հեռացնեն :

Անգլիական և հիւսիս-Ամերիկայի կառավարութիւնները որոշած են բողոքել լողացող սկաններուն համար, որոնցով Ինդին ծովը լիքն է :

Մայիս 12ին Լօնտօնի թերթերը կը հաղորդեն որ ճարտնացիք նորէն յարձակում գործելով Բօրթ-Արթուրի վրայ զգալի կորուստներ ունեցեր են :

Բեթերսպուրկէ կը հեռագրեն որ ճարտնացիներու Գալիի քովերը չորս քիլօմէթր տարածութեան վրայ շատ ամուր գիրքեր բռնած են :

Բեթերսպուրկէ կը հաղորդեն որ ռուսական բոլոր փաստազրահաւորները նորոգուած են ու պատրաստ կրկին կուի հլլալու :

ՅԲԱՆՍԱ

Մայիս 12ին Հոմմէն կը հաղորդեն որ Յրանսան Պապի հետ հաշտուելու իբր պայման դրած է զարախալ Մէրի աը վալի պետական քարտուղարի պաշտօնէն հեռացնելը :

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна